# *Գնային առաջարկ ներկայացնելու հրավեր*

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը «Ճգնաժամային իրավիճակներում հայտնված կանանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում» ծրագրի շրջանակներում հրավիրում է ընկերություններին՝ ներկայացնելու գնային առաջարկ ձեռք բերելու հետևյալ սարքավորումները.

1. Գաղտնակարի մեքենա նախատեսված հաստ և բազմաշերտ գործվածքների համար:
2. Գաղտնակարի մեքենա նախատեսված բարակ և նուրբ գործվածքների ճշգրիտ կարի համար:
3. Օվերլոկ 3–5 թելանի (արտադրական) – բարձր արտադրողականությամբ եզրակալման և միացման աշխատանքների համար:
4. Օվերլոկ կենցաղային (առավելագույն պարամետրերով) – բազմաֆունկցիոնալ, տարբեր գործվածքների մշակման համար:
5. Կովերլոկ արտադրական – տրիկոտաժի և ձգվող գործվածքների բլատային կարի համար:
6. Կենցաղային կարի մեքենաներ (առավելագույն պարամետրերով) – 5 հատ բազմաֆունկցիոնալ, բազմաթիվ կարային ծրագրերով:
7. Հարթակարի մեքենա (արտադրական) – բարձր արագությամբ ուղիղ կարի մեքենա՝ միջին և հաստ գործվածքների համար:
8. Օղակ-կոճակ պատրաստող մեքենա – հագուստի վրա օղակային կոճակների բացվածք ստեղծելու համար:
9. Խոնավաջերմային մշակման սարք – արդուկման և գոլորշիային մշակում ապահովող սարք:
10. Հագուստի վրա տպող սարք – նախատեսված բամբակե, պոլիեսթեր, խառը և տրիկոտաժե գործվածքների վրա պատկերների տպման համար:

Կարի մեքենաները պետք է լինեն նոր և կից լինեն համապատասխան փաստաթղթերը /տեխնիկական օգտագործման ուղեցույց, հավաստագիր/:

Ստորագրված, կնիքված գնային առաջարկները պետք է ներկայացվեն սքան տարբերակով՝ հետևյալ էլ. փոստի հասցեին՝ g.norikyan@caritas.am կամ ուղարկել «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ գլխամասային գրասենյակ՝ ք.Գյումրի, Հ. Սարգսյան 8, նրբանցք 3 հասցեով /փակ ծրարով՝ ծրարի վրա նշել «Ճգնաժամային իրավիճակներում հայտնված կանանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում» ծրագիր/ մինչև **2025թ դեկտեմբերի 8-ը, ժամը 15:00:**
Առաջարկի ուսումնասիրությունը տեղի կունենա **2025 թ.դեկտեմբերի 9-ին, ժամը 15:00** «Հայկական Կարիտաս» հասարակական կազմակերպության գրասենյակում (ք.Գյումրի, Հ. Սարգսյան 8, նրբանցք 3), և կընտրվի միևնույն որակի և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությունը:

Թերի լրացված, պահանջվող պայմաններին չհամապատասխանող, կամ ժամկետից ուշ ներկայացված գնային առաջարկները կմերժվեն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ծրագրի ղեկավար Գայանե Նորիկյանին 055-54-45-00 հեռ. համարով, ժամը 10:00-17:00:

Հասցե՝ ք. .Գյումրի, Հ. Սարգսյան 8, նրբանցք 3
Էլ հասցե՝ g.norikyan@caritas.am

# Գնային առաջարկ

Ընկերության անվանումը _____

Ընկերության իրավաբանական հասցեն _____

Ընկերության գործունեության հասցեն _____

Ընկերության գործունեության ոլորտը _____

Ընկերության բանկային տվյալները _____

ՀՎՀՀ _____ հեռախոս _____ էլ.հասցե _____

| Մոդել | Նկարագիր | Միավորի գին | Ընդհանուր գումարը |
|---|---|---|---|
| 1. | | | |
| 2. | | | |
| 3. | | | |
| 4. | | | |
| 5. | | | |
| **Ընդամենը** | | | |

Տնօրեն՝ _____

Առաջարկի ներկայացման ամսաթիվ _____